ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԵՔԵՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԱԴԱՄԱՆԴԱԿՈՒՌ «ԱՐԱՐԱՏ» ՇՔԱՆՇԱՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Նոյեմբերի 26-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Թեքեյան մշակութային միության կենտրոնական վարչության անդամներին՝ առաջնորդությամբ միության նախագահ Ռուբեն Միրզախանյանի:

Միության նախագահ Ռ. Միրզախանյանը շնորհավորեց Վեհափառ Հայրապետին գահակալության 5-րդ տարեդարձի առիթով՝ անդրադառնալով Նորին Սրբության եկեղեցաշեն ու ազգանվեր գործունեությանը: Նա հատկապես շեշտեց եկեղեցաշինության, մատաղ սերնդի քրիստոնեական դաստիարակության, ժամանակին համահունչ հոգևորականների նոր սերնդի պատրաստությանն ուղղված Հայոց Հայրապետի ջանքերի կարևորության մասին՝ երկար և արդյունաշատ օրեր մաղթելով Նորին Սրբությանը:

Ի գնահատություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ազգային-մշակութային գործունեության և հնգամյա արգասաբեր գործունեության՝ Ռուբեն Միրզախանյանը Հայոց Հայրապետին հանձնեց Թեքեյան մշակութային միության բարձրագույն ադամանդակուռ «Արարատ» շքանշանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, բարի գալուստ մաղթելով ներկաներին հայոց հոգևոր կենտրոն, շնորհակալություն հայտնեց ստացած պարգևի համար՝ հորդորելով ամենքին մեծ բանաստեղծ Վահան Թեքեյանի նման Հայոց Եկեղեցին դարձնել հոգու ծննդավայր՝ առավել ջանասիրությամբ ու նախանձախնդրությամբ լծվելով ազգին ու մեր ժողովրդին ծառայելու պատասխանատվության բարձր զգացումով: Վեհափառ Հայրապետը բեղուն գործունեություն մաղթեց Թեքեյան մշակութային միության անդամներին՝ հորդորելով հետևողը և շարունակողը լինել թեքեյանական ոգու և ավանդույթների:

«Այդ ոգին էական ու կարևոր է, որպեսզի ոչ միայն պահպանվի նախանձախնդրորեն մեր հայրերի սիրով կերտված դարավոր մշակույթը, այլ նաև որպեսզի մեր նոր ժամանակների մշակույթը, որ ծնունդ է առնում, լինի հայաշունչ, հայաբույր, լինի ազգային մեր մշակութային ավանդների լավագույն շարունակականությունը»,- նշեց Հայոց Հայրապետը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ